«Հաստատում եմ»
«Մարգարյան ծննդատուն» Մոր և մանկան
առողջության պահպանման ԳՀԿ
տնօրեն Ղ.Գ. Մելիք-նուբարյան
«12» սեպտեմբերի 2024թ.

Կարծիք
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
Լիլիթ Անդրեյի Սարգսյանի
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՐՈՒՑԵԼՈԶԻ
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ»
թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԴ.00.16
«Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ներկայացված աշխատանքը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում բրուցելոզի համաճարակաբանության ուսումնասիրությանը: Բրուցելոզը վարակիչ զոոնոզ հիվանդություն է, որի հարուցիչները պատկանում են *Brucella* ցեղին: Մարդկանց շրջանում բրուցելոզը աշխարհում առավել տարածված զոոնոզ հիվանդությունն է և հանդիսանում է ԱՀԿ կողմից հատկորոշված յոթ անտեսված զոոնոզ հիվանդություններից մեկը: Բրուցելոզը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ տնտեսության վրա: Էնդեմիկ երկրներում այն լուրջ գյուղատնտեսական և առողջապահական խնդիր է, որը զգալի տնտեսական կորուստներ է պատճառում անասնատերերին և հանդիսանում է ծանր հիվանդություն մարդկանց համար: Համաձայն ՄԱԿ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) գնահատման՝ «նախկին Խորհրդային Միության յոթ հանրապետություններ այժմ ընդգրկված են մարդկանց շրջանում բրուցելոզի տարածվածության ամենաբարձր մակարդակ ունեցող 25 երկրների շարքում»: Հիվանդության տարածվածության մակարդակը կարող է նաև նշանակալիորեն տարբերվել միևնույն երկրի քաղաքային և գյուղական շրջաններում: Բրուցելոզի էնդեմիկ տարածք հանդիսացող վայրերում հիվանդության ցածր մակարդակը ավելի շուտ կարող է լինել ոչ բավարար

հսկողության և հաշվետվողականության արդյունք, քան ցույց տալ հիվանդության իրական տարածվածությունը:

Այդ իսկ պատճառով, բրուցելոզի ավելի արդյունավետ վերահսկողության և դրա դեմ պայքարելու նպատակով Հայաստանի առողջապահական համակարգը կարիք ունի նման հետազոտությունների, որոնք թույլ կտան պարզաբանել տիրող համաճարակաբանական իրավիճակը:

Ելնելով հարցի հրատապությունից, Լ. Սարգսյանն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել ՀՀ-ում բրուցելոզի համաճարակաբանական օրինաչափությունները, որի հիման վրա գնահատել համաճարակաբանական ռիսկերը:

Նշված նպատակի իրագործման համար հեղինակի կողմից առաջադրվել է չորս խնդիր, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է տվել գնահատել բրուցելոզի համաճարակաբանական իրավիճակը, իրականացվել է տարածքային համաճրակաբանական գոտիավորում, ռիսկերի գնահատում, համաճարակաբանական օրինաչափությունների բացահայտում ՀՀ-ում: Հարկ է նշել, որ կատարված ուսումնասիրություններն արդիական են և ունեն գիտագործնական կարևոր նշանակություն Հայաստանի առողջապահական համակարգում:

Ատենախոսությունը գրված է հայերեն լեզվով, շարադրված է 120 էջի վրա, լուսաբանված է 18 աղյուսակում և 37 նկարում: Աշխատանքը կազմված է ավանդական ձևով և բաղկացած է ներածությունից, գրականության տեսությունից, սեփական հետազոտությունների 4 գլխից, ստացված արդյունքների քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 171 գիտական հղում և 4 հավելվածներից:

Հետազոտվող հիմնահարցից ելնելով, աշխատանքի ներածությունում հայցորդը հիմնավորում է թեմայի արդիականությունը, նպատակը, հետազոտության խնդիրները, ստացված արդյունքների գիտական նորույթը, գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ գրականության տեսության գլխի չորս ենթագլուխներում հեղինակը, ելնելով աշխատանքի նպատակից և խնդիրներից, մանրամասն ներկայացնում է առկա գիտական տեղեկատվությունը,

մասնավորապես, բրուցելոզի ընդհանուր բնութագիրը, համաճարակաբանական օրինաչափությունները, կանխարգելման, համաճարակաբանական վերահսկողության մոտեցումները, որոշ կլինիկական առանձնահատկություններ:

Ատենախոսության երկրորդ գլուխը ներկայացնում է հետազոտության նյութը և մեթոդները: Հայցորդի կողմից անց են համաճարակաբանական դիտողական ռետրոսպեկտիվ հետազոտություններ ՀՀ տարածքում բրուցելոզի համաճարակաբանական օրինաչափությունների պարզաբանման ուղղությամբ: Օգտագործվել են ժամանակակից վիճակագրական մեթոդներ: Բրուցելոզի տարածվածության գնահատականը, ռիսկային տարածքների որոշումն անցկացվել է ՀՀ տարածքային գոտիավորման ճանապարհով՝ բրուցելոզով առաջնակի հիվանդացության վերլուծության հիման վրա 2004-2022թթ. ընթացքում:

Աշխատանքի երրորդ գլուխն ամփոփում է հեղինակի սեփական հետազոտությունների արդյունքները, մասնավորապես, անդրադառնում է 2004-2014թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում առաջնակի հաստատված բրուցելոզի դեպքերի ընդհանուր նկարագրին, 2016-2022թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում առաջնակի հաստատված բրուցելոզի հիմնական բնութագրին ըստ մի շարք գործոնների, 2016-2022թթ. ժամանակահատվածում մարդկանց շրջանում առաջնակի հաստատված բրուցելոզի դեպքերի սեզոնային վերլուծությունը և «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն»-ում արձանագրված բրուցելոզի դեպքերի վերլուծությունը:

«Ամփոփում» գլխում հայցորդը բավականին մանրամասն անդրադառնում է իրականացված հետազոտություններին և վերլուծում ստացված արդյունքները:

Ստացված տվյալները տրամաբանորեն ամփոփված են 6 եզրահանգումներում, որոնք ամբողջովին արտահայտում են հետազոտվող հիմնահարցի էությունը և համապատասխանում են առաջադրված նպատակին ու խնդիրներին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները և համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության գիտական նորույթը և գործնական արժեքն անառարկելի են, առավել բրուցելոզի ակտիվացման մեր օրերում, նման աշխատանքներն ու

վերլուծությունները խիստ պահանջված են Հայաստանի համար, դրանց ժամանակին ներդրումը և համապատասխան մարմինների պատշաճ արձագանքը կարող են կանխել զոնոզ վարակների տարածումը հատկապես «Մեկ առողջություն» խորագրի ներքո, հաշվի առնելով վարակի զոնոզ բնույթը:

Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ Լ. Սարգսյանի կողմից կատարվել է բավականին ծավալուն, բազմակողմանի և մանրակրկիտ վերլուծություն՝ առաջադրված հիմնահարցերի հետևողականությամբ ու տրամաբանական հաջորդականությամբ: Այս ամենի հետ մեկտեղ ցանկանում ենք նշել որոշ պարզաբանման ենթակա հարցեր և ցանկություններ.

1. Հեղինակի կողմից իրականացված քարտեզավորումը բավականին կարևոր մոտեցում է ՀՀ բրուցելոզի առումով ռիսկային տարածքների բացահայտման և տարիների ընթացքում ռիսկայնության գնահատման տեսանկյունից, սակայն համաճարակաբնական առումով ցանկալի կլիներ մշակել և առաջարկել միջոցառումների համալիր՝ ուղղված յուրաքանչյուր գոտում /բարձր, միջին, չափավոր, ցածր ռիսկ/ վարակի կանխարգելման օրինաչափությունների բացահայտմանը և առավել արդյունավետ վերահսկողությանը «Մեկ առողջություն» սկզբունքից ելնելով:
2. Աշխատանքում բացակայում են տվյալները ՀՀ-ում բրուցելոզի հիմնական հարուցչի վերաբերյալ, մինչդեռ դա ունի առանցքային նշանակություն վարակի աղբյուրի և համապատասխան կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման տեսանկյունից: Եթե կան պատճառագիտության վերաբերյալ տվյալներ, ցանկալի կլիներ դրանք նույնպես ներառված լինեին աշխատանքում:

Բերված առաջարկությունները չունեն սկզբունքային նշանակություն և չեն կարող նսեմացնել ատենախոսի կողմից կատարված ծավալուն և խիստ պահանջված աշխատանքի արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Լիլիթ Անդրեյի Սարգսյանի «Հայաստանի հանրապետությունում բրուցելոզի համաճարակաբանական բնութագիրը» թեմայով ատենախոսությունը պահանջված աշխատանք է, հատկապես զոնոզ վարակների, մասնավորապես բրուցելոզի համաճարակաբանական վերահսկողության առումով

վտանգավոր համաճարակային ժամանակահատվածում: Ատենախոսությունը իր արդիականությամբ, բովանդակությամբ, ծավալով, ստացված արդյունքներով և դրանցից բխող եզրահանգումներով, գիտական նորույթով և առաջարկությունների գիտագործնական նշանակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանների շնորհման 7-րդ կետի պահանջներին, իսկ հայցորդն արժանի է ԺԴ.00.16 «Համաճարակաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է «Մարգարյան ծննդատուն» Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի գիտական խորհրդի 2024թ. սեպտեմբերի 12 նիստում (արձանագրություն թիվ 3), որին ներկա էին գիտական խորհրդի 16 անդամներից 12-ը՝ բ.գ.դ., պրոֆեսոր Գ.Գ. Օկոևը (ԺԴ.00.01), բ.գ.դ. Կ.Կ. Առուստամյանը (ԺԴ.00.01), բ.գ.դ., պրոֆեսոր Մ.Մ. Տեր-Ստեփանյանը (ԺԴ.00.16), Ս.Պ. Բարսեղյանը, բ.գ.թ. Մ.Գ. Շահինյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ա.Հ. Խաչատրյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Մ.Ս. Թադևոսյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Է.Ս. Տոտոյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Հ.Պ. Ազարյանը (14.00.16), բ.գ.թ. Ս.Ի. Ազիզյանը (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ն.Գ.Ֆրոլովան (ԺԴ.00.01), բ.գ.թ. Ա. Սայադյաը (ԺԴ.00.01 :

«Մարգարյան ծննդատուն» Մոր և մանկան առողջության
պահպանման գիտահետազոտական կենտրոնի
փոխտնօրեն գիտության գծով, բ.գ.դ. Կ.Կ. Առուստամյան

Կ.Կ. Առուստամյանի ստորագրությունը վավերացնում եմ
«Մարգարյան ծննդատուն»Մոր և մանկան առողջության
պահպանման գիտահետազոտական կենտրոնի
կադրերի բաժնի վարիչ Ս.Ս. Գրիգորյան

18.09.2024թ.